ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Գնահատող հանձնաժողովի նիստ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով ընթացակարգի գնահատման վերաբերյալ

ք. Երևան 10 օգոստոսի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մելքոնյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Գևորգյան Ա.Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հովհաննիսյան:

1. 2018թ օգոստոսի 06-ի Ժամը՝ 15:00-ին «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով ընթացակարգի կայացած 3-րդ արձանագրությամբ՝ NN 1, 2 չափաբաժինների մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, N4 չափաբաժնի մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել՝ «Լեյկո» ՍՊԸ-ն, որոնց վերաբերյալ կատարվել էր հարցում՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգով սահմանված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը և միևնույն ժամանակ առաջարկվել էր երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը:

2. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն և «Լեյկո» ՍՊԸ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են հրավերով սահմանված փաստաթղթերը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է հարցման պատասխանը, ուսումնասիրվել են հանձնաժողովի կողմից և համապատասխանում են հրավերի պահանջներին:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/47» ծածկագրով ընթացակարգի հաղթող՝ ընտրված մասնակիցներ ճանաչել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ և «Լեյկո»-ՍՊ Ընկերություններին:

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի(ների) հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.
Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Հ. Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Գևորգյան

2. ---------- Ա.Հակոբյան